

Մանօք, Վերոյիւեայ սեղեկութիւնն շեն պանանջում յայն աշակերտաց, որք ցանկան մսանելու ի նախաւորական բաժինը, որոյ մէջ բնդանում են մանկունք յՑ սարեկանն մինչ յ10 սարեկան, առանց հարգանքնութեան:

Գ. Միայն այն Հայագրի մանկունքն կարող են բնդանուիլ ի վերոյիւեայ յերիս կարգս ձրիավարժ աշակերտաց ձեմարանի, որք պատրաստուած են համաձայն վերոյգրեալ ցուցակի: Վասն հաստատացեալ հասանելոյ այս նպատակիս՝ Կառավարութիւնն ձեմարանի դիմում է այսու առ սեղական ուսումնարանս Հայոց, որք գտանում են ի Տփլիս, յԵրեւան, յԵջմիածին, ի Նոր Նախիջեան, ի Քեդոնիս, յԱսրախան և յայլ քաղաքս, յսնդրելով, որ բնննն համաձայն ձեմարանի ցուցակին զկոչուած աշակերտացուք (կանդիդատք) ի շարս ձրիավարժ աշակերտաց, և սան նոցա յամեն անգամին վկայական բուրքի մասին ունեւոյ նոցա բաւականին այն հմտութիւնքը, որք պահանջուում են վասն մսանելոյ շորս դասասանց միայն մէջ: Վասն որոյ

Դ. Ենողք այն կանդիդատքից՝ որք պիտի հաշուին ի բիւս ձրիավարժ որդեգրաց, պարտական են, յէս ստանալոյ գրաւոր վճարգիրք ի Կառավարութեան ձեմարանի, յառաջ քան զուղեւորիլը զնոյն կանդիդատս ի Մոսկվա, ներկայացուցանել զնոսա ի նախամննութիւն յիւեայ ուսումնարանաց մէջ, և շուրարկել ըզնոսա ի ձեմարան քանի որ շեն ստացած յուսումնարանաց այն բաւարար վկայութիւնքը, զորս պարտական են նոքա առաջի առնել ձեմարանի Կառավարութեան յէս հասանելոյ ի Մոսկվա: Առանց այս վրկայականաց ոչ ոք շունքի իրաւունք մսանելու ի բիւս ձրիավարժ որդեգրաց ձեմարանի:

Ե. Կոչուած կանդիդատքն ի հաշիս ձրիավարժ որդեգրաց յիւեայ երկից կարգաց, յէս հասանելոյ ի Մաս-

կվա, որքե կերպիս շեն կարող բնդանուիլ ի ձեմարան, երբ ոչ երաշխաւորութեամբ Մոսկվայի մէջ գրասնող անձին, այսինքն՝ ազգականի կամ բարեկամի, որ գրով կը պարտաւորուի բնդանել զնա դարձեալ իւր մօտ, երբ պատանի նմա արձակուիլ ի ձեմարանէ վասն օրինաւոր պատճառաց յառաջ քան զաւարտելն զուսման բնրացքը:

Զ. Որպէս ի ձրիավարժ աշակերտաց՝ քէ նոքա, որք կարձակուին ի ձեմարանէ յառաջ քան զաւարտելն զուսման բնրացքը, և քէ նոքա, որք կաւարտեն զուսման բնրացքը, ոչ ինչ դրամական օգնութիւն ստանալու շեն վասն վերադառնալոյ ի հայրենիս: Եւ այսու պատճառաւ

Է. Երբ որ կը մսանեն նոքա ի ձեմարան, նոցա ծնողքն կամ ազգականն պարտական են միւս վկայականաց նէս ի միասին առաջի առնել նոյնպէս գրաւոր պարտաւորութիւն, որ երբ պատանի իւրեանց որդաց կամ ազգականաց արձակուիլ ի ձեմարանէ յառաջ քան զաւարտելն զուսման բնրացքը կամ յէս այնորիկ՝ վասն որպիսի և իցէ պատճառաց, ինքեանք ծնողքն կամ ազգականն՝ ունին իւրեանց վերայ առնուլ զնանապահական ծախքը. իսկ՝ որք կցանկան զիւրեանց որպիսի կամ ազգականքը, սալ ի շարս աշակերտաց Հոգեւորական Բաժնի, նոքա՝ բաց յայնմանէ, պարտական են առաջի առնել գրաւոր պարտաւորութիւն, քէ ինքեանք երբեք անհանգիստ առնելու շեն զձեմարանի Կառավարութիւնը յսնդրենքով վասն ազգաս կացուցանելոյ զիւրեանց որպիսի կամ ազգականքը ի ծառայելոյ Հայոց կէտելցիներում, հոգեւոր զպրոցներում և Առաջնորդական աշխատանքներում:

Ը. Ի շարս ձրիավարժ կազարեան որդեգրաց բնդանում են առաւելապէս շքաւոր Հայ աղևուսականց որպիսի:


ՄԱՌԻՌ ԳԵՏՆ

ՌՌԻՍԻՌՅ ՌԻ ԶԵՆԱՅ ՍԱՀՄԱՆԱԳԻՌՈՒԹԸ

Արեւելեան Ասիոյ ամենէն մեծ գետերէն մէկն է Ամուր բտուած գետը, որ Պարքառապան կամ Զինկհան լեռներէն կը դիսի 48° 50' հիւսիս. լայնութեան ասպ: Ինչպէս Ասիոյ ուրիշ մէկքանի գետերը՝ և սա ևս այլեայլ անուններ ունի. բոլորած տեղը կը սուրի Օհոն. իսկ իւր բնթացքին ամենէն աւելի հիւսիսային դիրքն հասած ժամանակը՝ կը կոչուի Ամուր, որ և իւր սովորական անունն է: Եւ որովհետեւ

չորս կողմը պատող լեռները մթին անտառներով լեցուն են, անոր համար Զինկհիք Սաղալիին — ուրիս կանուանեն այս գետը, որ մեր սեւչուր ու Տանկաց գարատու անուններուն կը պատասխանէ:

Ամուր գետը իւր երկարաձիգ բնթացքին մէջ շատ մը մանր գետակներու ջրերն ալ կը բնդանի, անով աւելի ալ մեծնալով ու սրանալով, Ռուսի Ասիոյ բնդարձակ գաւառներէն



Ամուս գետի. — Բուսիսի և Չիսիսի մայրամուտից յայտնվողը :

շատը կտրելէն անցնելէն ու 680 վերսթ տեղ վազելէն ետեւ՝ Զօքա կղզւոյն զիմաց կթափի Խաղաղական Ռվկիանոսին մէջ:

Ամուռ գետը վերջի տարիներս աւելի ծանօթացաւ եւրոպայի, որովհետեւ Ռուսիոյ Չինաց հետ բրած դաշնագրութեամբը Չինաց բոլոր այն վարի գաւառները զորս Ամուռ կոռոզէր՝ անցան Ռուսաց ձեռքը, ու Ամուռի ջրերն եղան բնական սահմանագլուխ երկուց կայսերութեանց:

Ռուսաց տէրութիւնը այս դաշնագրութեամբ ոչ միայն նոր եւ բնդարձակ գաւառներու տէր եղաւ, այլ որ աւելի մեծն է՝ իւր ասիական վաճառականութիւնը Ամուռ գետոյն ձեռքովը բոլորովին նոր կեանք կառնու, վասնզի այսուհետեւ կրնայ Սիպիրի վաճառքները այս մեծաշաղթ գետին ընթացքովը դրկել յՌվկիանոս ու

անկէց յԱմերիկա եւ յԵւրոպա: Ուր առաջ եւրոպա վաճառք բերելոյ համար պէտք էր հազար վերսթ նամբայ բնել, եւ ան ալ այնպիսի անկոխ ու անանցանելի տեղերէ: Այսու՝ Սիպիրի մեծամեծ ճոխութիւններէն տէրութիւնը չէր կրնար մեծ օգուտ մը քաղել: Իսկ այժմ արդէն սկսան շոգենաւերը բանիլ Ամուռի ջրերուն մէջ, գաղթականներ կղրկուին ու կհաստատուին սահմանագլխին եզերքը, ու վաճառականութիւնը տէրութեան հովանաւորութեամբը մեծ գործունէութիւն սկսաւ ցուցնել:

Գրուած գեղեցիկ պատկերին մէջի երեւցողները Չինկիան լեռներն են, որոց մէջէն կանցնի Ամուռ բնակարան երեւցած կողմը՝ Ռուսիոյ մասն է, իսկ զիմացի ափունքը՝ Չինաց սահմանագլուխն է:

ԵԿԵՂԵՅԻ ՍՐԲՈՅՆ ՅՈՎԱԿԻՄՅԱՅ ԵՒ ԱՆՆԱՅԻ ԻԹԼՈԴՈՍԻԱ,
եւ պաշտպան քաղաքին
ԼՈՅՍ ՊԱՐՈՆ ՆԱՀԱՏԱԿ

Իրիմու Հայոցս, եւս եւ ուրիշ քրիստոնեայ ազգաց, անուանի ուխտատեղիներէն մէկն եղեր է հարիւրաւոր տարիներէ իվեր՝ Թէոդոսիոյ հարաւային կողմը բարձրադիր լեռան վրայ շինուած ծովահայեաց եկեղեցին սրբոց Յովակիմայ եւ Աննայի, ծնողաց Ս. Աստուածածնի:

Ատենով այս եկեղեցւոյն քովը վանք է եղեր. եւ Թէոդոսիա քաղաքը այնչափ բնդարձակ էր կրսնն, որ հայ բնակիչներուն տները մինչեւ այն վանքին քովերը կհասնէին: Այն ժամանակները ութսուն հազար հայ կհամրուի եղեր այս տեղ:

Գրեթէ հարիւր տարի կայ որ այն վանքը բոլորովին քանդուեր անհետացեր է. բայց եկեղեցւոյն երեք աւերակ սրահերը գետնին երեսնէն տեղ տեղ կէս կանգուն՝ տեղ տեղ ալ մինչեւ չորս կանգուն մնացած, եւ փրատակի քարե-

րովը ծածկուած, օրէ օր փճանալու վրայ էր: Այսու ամենայնիւ բարեպաշտ ժողովուրդները զարմանալի ջերմեանդութեամբ եւ հաւատով անդադար այն տեղը ուխտի կյաճախէին, եւ շատը իրենց եռանդուն խնդիրքը բնդունած՝ լեռնէն վար կիջնային ուրախութեամբ:

Անկէց իզատ՝ սրբոց Յովակիմայ եւ Աննայի տօնին օրը այն աւերակներուն մէջ ժամ ու սուրբ պատարագ կմատուցուէր, թէպէտեւ ետքը նոյնպէս անպատուար երեսի վրայ կձգուէր սուրբ սեղանը՝ կոխան անցաւորաց եւ անբանից:

Ուխտաւորաց զխտաւորութեանը մէջ անմոռանալի էր եւ է միշտ՝ նաեւ նոյն եկեղեցւոյն մէջ թաղուած Լոյս Պարոն նոր նահատակին գերեզմանը, որոյ աւերակացը վրայ իրենց ջերմեանդութիւնը կկատարէին, բայց եւ ո-